«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ 2019 – 2020, 2020-2021 ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ Քոլեջ) իրականացնում է «Նախնական և միջին մասգիտական կրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջին մասնագիտական կրթություն չորս՝ «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտական կրթական ծրագրեր:

Հիմք ընդունելով Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության պահանջները՝ Քոլեջում սկսած 2019-2020 ուստարվանից իրականացվում են հիմնարար բարեփոխումներ, ինչպես կառավարման, այնպես էլ ուսումնական գործընթացներում:

Ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով համաձայն Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի Խնդիր 1.1. 5-րդ կետի պահանջների Քոլեջի բոլոր ստորաբաժանումների, այդ թվում նաև ամբիոնների համար մշակվեց և ներդրվեց իրենց գործունեության պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: Այն ամբողջովին բխում է Քոլեջի գործող ՌԶԾ-ի նպատակներից և խնդիրներից:

Ստորաբաժանումների պլանավորումը իր մեջ ներառում է՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ, նշված հստակ վերջնարդյունքներ և վերջնաժամկետներ:

Քոլեջում իրականացվող 4 ՄԿԾ-ի համար գործում են՝ 3 մասնագիտական և 2 տեսական ամբիոններ:

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

№	Ամբիոն	Աշխատակից	Դասախոս	Ուս. օժանդակ	Միջին տարիք
1.	«Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության և հիգիենայի»	2	2	0	30
2.	«Դեղագիտական առարկաների»	4	4	0	40
3.	«Սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր հումանիտար և բնագիտական առարկաներ»	16	16	0	42
4.	«Ատամնատեխնիկական և ստոմատոլոգիական առարկաների»	4	4	0	40
5.	«Թերապիայի, քույրական գործ և նեղ մասնագիտական առարկաների»	3	3	0	45

Աղյուսակ 2

№	Ամբիոն	Ուս. ռեսուրսներ	Վերապատ. (անգամ)	Ուս. նյութերի էլ. ռեսուրսներ	Դասալսումներ
1.	«Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության և հիգիենայի»	Բավարար	1	Մասամբ առկա է	6
2.	«Դեղագիտական առարկաների»	Բավարար	1	Մասամբ առկա է	7
3.	«Սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր հումանիտար և բնագիտական առարկաներ»	Բավարար	1	Մասամբ առկա է	6
4.	«Ատամնատեխնիկական և ստոմատոլոգիական առարկաների»	Բավարար	1	Մասամբ առկա է	6
5.	«Թերապիայի, քույրական գործ և նեղ մասնագիտական առարկաների»	Բավարար	1	Մասամբ առկա է	5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 5 ամբիոնները ժամանակին ՈԱ պատասխանատուին են ներկայացրել 2019-2020 և 2020-2021 ուստարիների կատարողական զեկույցները համաձայն գործող ձևաչափի:

Կատրողականների ուումնսիրության և վերլուծության ադյունքում պարզվեց.

1. Քոլեջում դասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 39.4:
2. Որոշ ամբիոններում առկա է ուսումնաօժանդակ կազմի թափուր տեղեր:
3. Բոլոր ամբիոններում ուսումնական, մեթոդական ռեսուրսները բավարար են և ապահովում են ուսումնական գործընթացը անխափան կազմակերպելու և իրականացնելու համար:
4. Բոլոր 5 ամբիոնի վարիչները մասնակցել են Մանկավարժական և Տնօրինական խորհուրդների հերթական նիստերին:
5. Հաշվետվություն ներկայացրաց ամբիոնները թերի են ներկայացրել ըստ մասնագիտությունների կիսամյակների ամբիոնում դասավանդվող առարկաների վերաբերյալ քանակական և որակական առաջադիմության տվյալները: շտապ ներկայացնել
6. Փոխադարձ դասալսումները հիմնականում իրականացրել են, ընդամենը 9 դասալսում:
7. Հետազոտական աշխատանքները (կուրսային, նախաավարտական կամ դիպլոմային), հատկապես մասնագիտական ամբիոններում բացակայում են: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ամբիոններում առկա են միայն ռեֆերատիվ աշխատաքներ, որոնք հիմնականում համացանցից վերցված ուսումնասիրություններ են:
8. Ուսանողներին անհրաժեշտ խորհրդատություն տրամդրվել է բոլոր ամբիոնների կողմից: Խորհրդատվությունները եղել են հիմնականում՝ ուսումնական գործընթացին վերաբերող (քննությունների հարցաշարերի, պրակտիկաների, վերահանձնումներ և այլնի հետ կապված):

Քոլեջում գործող կատարողականի նոր ձևաչափով բոլոր ամբիոնները ներկայացրել են իրենց պլանով նախատեսված գործողությունների վերաբերյալ զեկույց, սակայն բոլորի մոտ բացակայում էր վերլուծական և համեմատական մոտեցումները:

Կայն որոշ կատարողական զեկույցներ, որոնք թե' բովանդակությամբ և թե' կառուցվածքով գրեթե նույն էին:

Մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ամբիոներում բացակայում են.

1. Հետազոտական բնույթի աշխատանքները:
2. Դասավանդվող դասընթացների էլեկտրոնային ռեսուրսները:

3. Դասախոսական կազմի մոտ մասնագիտական պարտականությունների կատարման մոտիվացիան:
4. Նորարարական, ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հնարավորության դեպքում, մասնագիտական ամբիոններին տրամադրել մեկական աշխատակից, ամբիոնների ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար (լաբորանտ, կամ ուսումնաօժանդակ կազմ):
2. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել սեմինարներ ամբիոններում վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով:
3. Հաջորդ ուստարվա կատարողականները ներկայացնել համեմատական վերլուծություններով:
4. Ամբիոններում դասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման անհրաժեշտության դեպքում դիմել ՄՌԿ և ընդհանուր բաժին:
5. Իրականացնել ամբիոններում դասավանդվող դասընթացների ուսումնական նյութերի թվայնացում:
6. Մշակել և ուսումնական գործընթացում ներառել ինտերակտիվ դասավանդման ուսումնական նյութեր:
7. Քոլեջում գործող հետազոտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգերի պահանջներին համապատասխան իրականացնել հետազոտական աշխատանքներ:
8. Բարելավել ամբիոններում ուսանողներին խորհրդատվության տրամադրման մեխանիզմները, այն իրականացնել գործող կարգի համապատասխան:
9. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ պարբերաբար քննարկել ուսումնական գործընթացին առնչվող հարցերը և արձանագրել:
10. Ուսումնական և վարչարարության գործընթացների բարելավման, արդյունավետության բարձրացման հետ կապված կոնկրետ առջարկությունների դեպքում գրավոր ներկայացնել ՈԱ պատասխանատուին:
11. 2021-2022 ուստարվա կատարողական զեկույցներում ներկայացնել նոր ձևաչափով դասալսումների կազմակերպման վերաբերյալ վերլուծություններ, ամբիոններում ուսումնական էլեկտրոնային ռեսուրսների վերաբերյալ հստակ տվյալներ:
12. Հաջորդ ուստարվա ընթացքում յուրաքանչյուր ամբիոն պետք է կազմակերպի առնվազն 10 փոխադարձ դասալսումներ:
13. Կազմակերպել համատեղ (մասնագիտական և տեսական ամբիոններ) հետազոտական, համեմատական վերլուծական բնույթի առնվազն 5 աշխատանք: